

կրկեցընեն որ դիրտը տակը իջնայ, ու վրայի կապած փրփուրը կըհանեն: Ո)և որ շաքար դարձած թափանցիկ մեղր ալ ելլէ՝ ան ալ պէտք է առանձին զատել:

Ա՞ղը հանելէն վերջը մոմոտ դիրտը լեցուր խալկինի մը մէջ. կէսէն աւելի՝ 40 կամ 50 աստիճան տաքութեամբ ջուր դիր վրան, այնչափ որ առանց թափելու կարենաս խառնել, թէ որ ջուրը դուրս թափի, պակսեցընելու է կրակը, իսկ թէ որ մոմը սկսի վեր ելլել սաստիկ թափելու չափ, պէտք է վրան քիչ մը պաղ ջուր լեցընել, ինչուան որ այսպէս մեղրամոմը հանելով զատուի աղտէն, ետքը լաթէ մը կանցընես, ու քիչ մը պաղելուն պէս ջրին մէջէն կըժողվես որ բաւական մաքրուած կըլլայ:

Ա՞մը Ճերմկցընելու համար աս դիւրին գիւտը հնարած են մոմագործները: Ա՞սանցըի՝ վրայ առած գլան մը ունին, որ ինչուան կէսը ջրին մէջ է՝ մասնաւոր աւազանի մը կամ որ և իցէ տաշտի մէջ. ետքը մեղրամոմը խալկինի մէջ տաք ջրով հալեցուցած կամաց կամաց կըվազցընեն գլանին վրայ, ու մէկ կողմանէ գլանը կըդարձընեն. ասով ան կաթած մեղրամոմը շերտ շերտ բարակ կտորներով կիյնան ջրին մէջ. անոնք ժողվելով արեգական ու առաւօտեան ցողի մէջ կըփըռեն լաթերու վրայ. թէ որ ցող չիջնայ՝ ջուր պէտք է ցողել: Ա՞ գլանէ անցընելու գործողութիւնը կըկրկնեն, ու քանի մը անգամէն կըլլայ Ճերմակ մաքուր, բայց քամիի ու փոթորկի ատեն պէտք չէ դուրս թողուլ փուած մեղրամոմը, ապա թէ ոչ, աւազ ու փոշի կըլեցուի վրան: Լարելի է նաև շուտ մը Ճերմկցընել մասնաւոր քիմիական գործողութէ, բայց մեղրամոմը գէշ հոտ կուտայ վառելու ատեն, և աղէկ ալ չվառիր:

1 Մէւ:


## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՀԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ

1 նորբայի սուրբ Պօղոս եկեղյութիւն:

1 Ո՞ւ ՑՐԱՅԻ մայր Եկեղեցին, որ Պօղոս առաքելոյն անունովը շնուած է, քրիստոնէութեան երկրորդ տաշարը կըսեպուի Հռոմի սուրբ Պիտրոսէն ետքը. բայց աս բաղդատութիր Ճարտարապետական ձեխն կողմանէ միայն հասկընալու է, որ յունական ու հռոմէական ունին բաղդրուած է. ապա թէ ոչ, միջին դարու փառաւոր Եկեղեցիները շատ աւելի հոյակապ ու գեղեցիկ են. ինչպէս կոստանդնուպօլսոյ Այա Առաքիան, Ա ենետիկի սուրբ Ապրկոսը, Ա իւլանի Ա եննայի Ա ենայի Փիղայի մայր Եկեղեցիները, և այլն:

Ա Եկեղեցւոյն Ճարտարապետ եղած է Ա բեն անունով անգղիացին. շնչնքը սկսեր է 1672ին, ու 1710ին լմնցեր է. Ա բեն շնչնքին առջի քարը դրեր է, և իր որդին վերջինը: Ա սոր ձեւը յունական խաչի ձեւ է, ֆրեկութերը՝ երկայնութենէն կարծէ, և բոլոր Եկեղեցին իրեք բաժնուած է՝ այլ և այլներս մտած մատուռներով: Արկայնութիւնը արևելքէն արևեմուտք՝ 570 իտալական ոտք է, իսկ լայնութիւնը 311, մէկտեղ առնելով գրսի կիսաբոլոր գաւիթներն ալ որ խաչին թեւերուն երկու ծայրերն են: Ա էջտեղը մեծ գմբէթ մը կայ՝ բարձրութիւնը 33 ոտք. գմբէթին ներսի կողմի տրամագիծն է 100 ոտնաչափ, գրսինը 145: Ճակատը երկու տեսակ Ճարտարապետական կարգով շնչնած է, մէկը կորընթեան, մէկալը խառն. և Ճակատին երկու կողմը մէյմէկ զանգակատուն կայ, զանազան սիւներով բուրգերով ու գեղեցիկ քարերով զարդարուած.



քարերն ալ այլևայլ տեղերէ բերուած, ինչուան հին Տրովադային աւերակներէն : Իսկ բոլոր շենքը Փորթեանտի քարով շինուած է, որ մարմարինի պէս կարծր է :

Դախքը ոմանք 810,000 լիրէ սթէռլին եղած է կըսեն, որ կընէ տասնուինը միլիոն չորսհարիւր քառասուն հազար ֆրանք : Այս եկեղեցւոյն ներսի գեղեցկութեանը վրայ խօսելիք չունինք, որովհետեւ անգղիացւոց ամէն եկեղեցիներուն պէս ասոր ներսի կողմն ալ անզարդ է :

#### ԳԻՏԵԼԻՔ

#### ԼԻՆԴԱԿԱԿԱՆ ՏԱԳԻՒԱՌԵԼԻՑԻ :

Աս փափաքելի բան էր մեզի որ միշտ աղեկ օրինակ առնելու և խելք սորվելու բաներ դնեինք մեր օրագրին մէջ, մանաւանդ լուրոպայի գիւտերուն ու բարեկարգութիներուն վրայ խօսելու ատեն : Ո՞ւղք որ հարկը կըսիպէզմեզ' երեմն այնպիսինիւթեր ալ դնելու որ թէպէտ ծիծաղական կամնակ վնասակար են, բայց լուրոպայի գիւտ ըլլալով՝ կընան մեր աղգին մէջ ալ շուտ կամ ուշ տարածուիլ, և տկարներուն կամ տգէտներուն վնասակար ըլլալ : Այսպատճառաւ օրագրիս 233 երեսը նմանաբուժութեան արհեստին վրայ համառօտ տեղեկութիւն մը տուինք . նոյն մըտքով ալ հոս կենդանական մագնիսութեան վրայ խօսինք : Ո՞իայն թէ հիմակուընէ կըզուրցենք որ նմանաբուժութիւնը թէպէտ օգտակար բան չէ, բայց վնասակար բան ալ կընայ չսեպուիլ . իսկ աս կենդանական մագնիսութեան վնասները խիստ յայտնի են, և օրէ օր յայտնի կըլլան . անոր համար աս օրերս Փարիզու մէջ քանի մը հոգի այսպիսի խարդարութեան արհեկան արհեստին առաջակա ալ ամէն տեղ ու ամէն բանի մէջ կայ, և անով մեծ կապակցուի ունին իրարու հետ երկնային ու երկրաւոր մարմինները : Պայլեի, Պուանքլէն, Լաւուազիէ և ուրիշ երևելի գիտուններ ստոյգ քննութեամք ցցուցին՝ որ այսպիսի հեղանիւթ չկայ ամենեին, և ատ կենդանական մագնիսութիւնը ըսուածը ( որ Ո՞եսմերականութիւն

տով այլևայլ անկարգութեանց պատճառ ըլլալնուն համար բանտ զրուած են :

Ո՞ագնիս քարին՝ բնական զօրութիւնը յայտնի է, որով երկաթը իրեն կըքաշէ . մենք ալ ասոր յատկութիւններուն վրայ ուրիշ ատեն տեղնիտեղը կըխօսինք : Այսկէ շատ տարի աւած Ո՞եսմեր անունով՝ իսաբերայ գերմանացի բժիշկը ձայն մը հանեց թէ ինքը մագնիսով բժշկութիւններ կընէ, և թէ իրեն բանեցուցածը համարդային մագնիսչէ, հապահութանական նագնիսութիւնն է, այսինքն այնպիսի մագնիսական զօրութիւն մը որ կենդանի մարմիններու վրայ կազդէ : Տեսմերով որ Ո՞եննային մէջ իրեն խարդախութիւնները շատ չեն անցնիր, 1778ին Փարիզ գնաց . առջի բերան շատ մարդ խաբեց, բայց ետքը ետքը՝ իրեն վազող հիւանդներուն շատութենէն և անոնց մէջ հանդիպած անկարգութիւններէն շատին աչքը բացուեցաւ, տէրութիւնն ալ գիտուն մարդիկներու ձեռքով քըննեց, հասկըցաւ բանը, ու աստիկ արգիլեց իրեն ան գործողութինները . ուստի վաստրկած ստակները առաւ գնաց իր հայրենիքը, և հօն մեռաւ 1815ին : Օ արմանք է որ իր վարդապետութիւնը կամ թէ խարդախութիւնը իրեն հետ չվերջացաւ բոլորովին, և Կաղղիայի ու Կերմանիայի մէջ շատ միամիտ մարդիկ իսել մը ատեն հաւտացին իրեն դրութեանը : Ո՞եսմեր կըսէր թէ կենդանական մագնիսութիւնը մէկ հեղանիւթ մըն է որ ամէն տեղ ու ամէն բանի մէջ կայ, և անով մեծ կապակցուի ունին իրարու հետ երկնային ու երկրաւոր մարմինները : Պայլեի, Պուանքլէն, Լաւուազիէ և ուրիշ երևելի գիտուններ ստոյգ քննութեամք ցցուցին՝ որ այսպիսի հեղանիւթ չկայ ամենեին, և ատ կենդանական մագնիսութիւնը ըսուածը ( որ Ո՞եսմերականութիւն